215 Շուրջս խավար է, աղոտ է լույսը,

1. Շուրջս խավար է, աղոտ է լույսը,
Մութի մեջ սիրտս տխուր է, տխուր,
Երկնային Փրկի՛չ, Դու ես իմ հույսը,
Այս խավար ժամին Քո լույսը ինձ տուր:(2)

2. Բարեկամներից հեռու եմ, հեռու,
Դու ես ինձ մոտիկ, Բարեկամ հզոր,
Սիրտս տխուր է մահու չափ, տրտում,
Ապավեն եղի՛ր, Փրկի՛չ իմ հզոր: (2)

3. Ինձ շրջապատող գայլերն ամեհի
Սպառնում են իրենց սուր ժանիքներով,
Ուզում են անձս մատնել կորստի,
Փրկի՛ր ինձ, փրկի՛ր զորեղ բազուկով: (2)

4. Չարի խորհրդով անխղճորեն, բիրտ,
Խորամանկության մութ ճամփաներով
Ուզում են ջնջել խոսքդ ճշմարիտ,
Փրկելու կգաս զորեղ բազուկով: (2)